«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 93-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« »_____ 2025 թվականի N___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 93-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 31-ի N93-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-01-2014 <Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր> շինարարական նորմերի հավելվածի.

1) VI բաժնի 44-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ, հետևյալ բովանդակությամբ. <Միջին ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող (II կատեգորիայի) անհատական բնակելի տների, ինչպես նաև սոցիալական նշանակության քաղաքաշինական օբյեկտների (հանրակացարանային տիպի բնակելի ֆոնդի, սոցիալական բնակարանային

ֆոնդի ու ժամանակավոր օթևանի կացարանների) ներքին մակերեսների (բնակելի կամ ոչ բնակելի սենքերի) համար հատակից առաստաղ բարձրությունը կարող է սահմանվել 2.4մ-2.7մ՝ ըստ նախագծման առաջադրանքի։>

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։